


1.2.5. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2003թ. հունվար-մարտին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 4.7%:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մարտ	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ. մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	1268.1	104.7	502.6	135.5
<i>այդ թվում՝</i>				
երկաթուղային տրանսպորտով	427.7	104.8	168.8	126.2
<i>որից՝</i>				
արտահանվել են բեռներ	46.0	121.4	17.9	130.7
ներկրվել են բեռներ	189.2	83.0	60.4	105.0
ներհանրապետական փոխադրումներ	192.5	135.3	90.5	144.6
ավտոտրանսպորտով	520.1	94.2	254.2	186.6
<i>որից՝</i>				
արտահանվել են բեռներ	14.2	64.0	6.1	132.6
ներկրվել են բեռներ	59.5	114.6	22.3	113.2
ներհանրապետական փոխադրումներ	446.4	93.4	225.8	2.0անգամ
օդային տրանսպորտով¹	1.7	100.0	0.7	116.7
<i>որից՝</i>				
արտահանվել են բեռներ	0.5	83.3	0.2	100.0
ներկրվել են բեռներ	1.2	109.1	0.5	125.0
խողովակաշարային տրանսպորտով	318.6	127.8	78.9	78.7

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-մարտին, %




¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:
38 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-մարտին»

2002թ. հունվար-մարտին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների տեսակարար կշիռը կազմել է 33.7%, ավտոմոբիլայինը՝ 45.6 %, օդայինը՝ 0.1%, խողովակաշարայինը՝ 20.6 %:

Ընդհանուր օգտագործման երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների բեռնափոխադրումների ծավալները, ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի¹

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը ² , մարդ	Բեռնափոխադրումների ծավալը, հազ. տոննա	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտը նկատմամբ, %
Ընդամենը ՀՀ	62	13318⁰	1077.8	106.3
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	10	34	34.5	66.7
6-15 մարդ (փոքր)	8	73	8.4	33.9
16-30 մարդ (միջին)	14	304	41.3	104.8
31 և ավելի մարդ (խոշոր)	30	12907	993.6	110.6

Բեռնափոխադրումների ծավալների կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի 2003թ. հունվար-մարտին, %



Երկաթուղային տրանսպորտ. 2003թ. հունվար-մարտին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 4.8%: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 44.2% (2002թ. հունվար-մարտի 55.9% դիմաց), արտահանված բեռների բաժինը 10.8% (2002թ. հունվար-մարտի 9.2% դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 45.0% (2002թ. հունվար-մարտի 34.9% դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների 2003թ. հունվար-մարտին 2002թ. հունվար-մարտի նկատմամբ քարածխի փոխադրման ծավալն ավելացել է 2.5 անգամ, հանքաքար գունավոր մետաղներինը՝ 2.4 անգամ, ցեմենտինը՝ 5.8%-ով: Քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալը նվազել է 90.7%-ով, սև մետաղներինը՝ 22.2%-ով, հանքային շինարարական նյութերինը՝ 21.7%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 21.3%-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 20.1%-ով, անտառային բեռներինը (գերան, փայլանյութեր, ֆաներա և այլն)՝ 20.0%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 6.8%-ով:

¹ Բեռնափոխադրումների ծավալներն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի առանձին տեսակների, ներկայացված են «Շետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածում:

² Սույն ցուցանիշը ներառում է նաև երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտի կազմակերպությունների այն աշխատողների թվաքանակը, որոնք զբաղված են ուղևորափոխադրումներով:


1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

Վագոնների միջին օրական բեռնաթափումը 2003թ. հունվար-մարտին կազմել է 71 վագոն և 2002թ. հունվար-մարտի նկատմամբ ավելացել է 7 միավորով, իսկ բեռնումը կազմել է 45 վագոն և ավելացել 10 միավորով: Նույն ժամանակաշրջանում վագոնապտույտը կազմել է 12.7 օր և 2002թ. հունվար-մարտի նկատմամբ դանդաղել է 5.0 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2003թ. հունվար-մարտին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մարտի ցուցանիշի նկատմամբ նվազել է 5.8%, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 11.5% (2002թ. հունվար-մարտի 9.4 % դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 7.1% (2002թ. հունվար-մարտի 6.2% դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.7 % (2002թ. հունվար-մարտի 4.0% դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 14.1% (2002թ. հունվար-մարտի 4.1% դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 85.8% (2002թ. հունվար-մարտի 86.6 % դիմաց):

Օդային տրանսպորտ: 2003թ. հունվար-մարտին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 1.7 հազ. տոննա և 2002թ. հունվար-մարտի նկատմամբ մնացել է անփոփոխ, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 70.6% (2002թ. հունվար-մարտի 64.7 % դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 29.4 % (2002թ. հունվար-մարտի 35.3 % դիմաց): Օդային տրանսպորտով փոխադրված բեռների 35.3 % (0.6 հազ.տոննա) իրականացվել է հայաստանյան շարժակազմով (2002թ. հունվար-մարտի 29.4 % կամ 0.5 հազ. տոննա բեռի դիմաց):

Կանոնավոր չվերթներով բեռնափոխադրումների ծավալն ըստ հաղորդակցության ուղիների, %



Խողովակաշարային տրանսպորտ: 2003թ. հունվար-մարտին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մարտի ցուցանիշի նկատմամբ աճել է 27.8 %:

Բեռնաշրջանառություն: 2003թ. հունվար-մարտին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 26.3 %:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշները ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2003թ. հունվար-մարտ	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ. մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն. տոննա-կմ այդ թվում՝	557.6	126.3	175.7	89.4
Երկաթուղային տրանսպորտով	113.0	118.9	43.4	119.2
ավտոտրանսպորտով	14.5	148.0	7.0	189.2
օդային տրանսպորտով	1.4	116.7	0.4	57.1
խողովակաշարային տրանսպորտով	428.7	127.8	106.2	78.7

Ուղևորափոխադրումներ: 2003թ. հունվար-մարտին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-մարտի ցուցանիշի նկատմամբ աճել է 10.0%:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշները ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մարտ	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ. մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	40397.6	110.0	14600.2	112.7
Երկաթուղային տրանսպորտով	234.3	109.0	86.3	119.5
ավտոտրանսպորտով	34342.0	112.7	12414.8	112.3
օդային տրանսպորտով ¹	159.2	107.6	55.0	110.2
էլեկտրատրանսպորտով	5662.1	96.1	2044.1	115.2

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-մարտին, %




¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-մարտին»

2002թ. հունվար-մարտին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 83.0%, օդային տրանսպորտինը՝ 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 16.0%:

Ընդհանուր օգտագործման էլեկտրատրանսպորտով, երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ուղևորափոխադրումների ծավալները, ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի¹

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը ² , մարդ	Ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտը նկատմամբ, %
Ընդամենը ՀՀ	230	14023⁰	27056.4	118.3
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	91	271	3217.8	169.4
6-15 մարդ (փոքր)	51	483	2006.2	148.3
16-30 մարդ (միջին)	40	888	6322.5	2.1անգամ
31 և ավելի մարդ (խոշոր)	48	12381	15509.9	93.2

Ուղևորափոխադրումների ծավալների կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի 2003թ. հունվար-մարտին, %




Օդային տրանսպորտ: 2003թ. հունվար-մարտին օդային տրանսպորտով փոխադրվել է 159.3 հազ.ուղևոր, որի 45.4% (72.3 հազ. ուղևոր) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը:

Ի տարբերություն 2002թ. հունվար-մարտի, 2003թ. հունվար-մարտին հայաստանյան շարժակազմով չարտերային չվերթներ չեն իրականացվել :

¹ Բեռնափոխադրումների ծավալներն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի առանձին տեսակների, ներկայացված են «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածում :

² Սույն ցուցանիշը ներառում է նաև երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտի կազմակերպությունների այն աշխատողների թվաքանակը, որոնք զբաղված են բեռնափոխադրումներով:

Կանոնավոր չվերթներով ուղևորափոխադրումների ծավալն ըստ հաղորդակցության ուղիների, %



Ինքնաթիռների, ուղղաթիռների չվացուցակով կատարված չվերթները

	2003թ. հունվար-մարտ	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Չվացուցակով նախատեսված չվերթների քանակը, միավոր	1363	104.7
Փաստացի մեկնած ինքնաթիռների քանակը, միավոր	1447	108.1
<i>այդ թվում`</i>		
ուշացումով	477	193.1
որից` եղանակի պատճառով	82	174.4
վառելիքի պատճառով	6	150.0
այլ պատճառներով	389	198.5

2003թ. հունվար-մարտին օդային տրանսպորտով փաստացի մեկնած ինքնաթիռների քանակը չվացուցակով նախատեսված չվերթների քանակի նկատմամբ զերազանցել է 6.2% (2002թ. հունվար-մարտի 2.8% դիմաց): Ընդ որում, ԱՊՀ երկրների հետ հաղորդակցությամբ կատարվել է 1257 թռիչք, այլ երկրների հետ 190 թռիչք:


Փաստացի կատարված չվերթներից 33.0% կատարվել է ուշացումով, որից` 17.2% անբարենպաստ եղանակի, 1.3%` վառելիքի, իսկ մնացածը` այլ պատճառներով:

Էլեկտրատրանսպորտ: 2003թ. հունվար-մարտին էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների ծավալը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ նվազել է 3.9%:

Ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մարտ	2003թ. հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ. մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, ընդամենը, հազ.մարդ	5662.1	96.1	2044.1	115.2
<i>այդ թվում`</i>				
մետրոպոլիտենով	3684.0	108.8	1352.8	119.6
տրամվայով	632.7	67.6	236.2	117.6
տրոլեյբուսով	1220.1	85.5	413.3	100.3
ճոպանուղով	125.3	86.7	41.8	135.3

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների, 2003թ. հունվար-մարտին, %



2002թ. հունվար-մարտին էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 57.4 %, տրոլեյբուսով՝ 24.2 %, տրամվայով՝ 15.9 % և ճոպանուղով՝ 2.5 %:

Ուղևորաշրջանառություն: 2003թ. հունվար-մարտին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 15.4 %:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մարտ	2003թ.հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ. մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ	604.4	115.4	209.6	109.8
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	8.7	86.1	3.3	126.9
ավտոտրանսպորտով	438.2	124.1	149.0	105.7
օդային տրանսպորտով	134.7	98.5	48.1	117.0
էլեկտրատրանսպորտով	22.8	95.4	9.2	113.3

Ուղևորաշրջանառության ցուցանիշներն ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-մարտ	2003թ.հունվար-մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ. մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
էլեկտրատրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն.ուղ-կմ	22.8	95.4	8.2	113.9
<i>այդ թվում՝</i>				
մետրոպոլիտենով	14.0	108.5	5.1	118.6
տրամվայով	2.8	66.7	1.0	111.1
տրոլեյբուսով	5.9	88.1	2.0	100.0
ճոպանուղով	0.1	100.0	0.1	2.3անգամ

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2003թ. հունվար-մարտին ճանապարհատրանսպորտային պատահարները (ճՏՊ) 2002թ. հունվար-մարտի նկատմամբ նվազել են 2.7 %:

ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2003թ. հունվար- մարտ	2003թ.հունվար- մարտը 2002թ. հունվար-մարտի նկատմամբ, %	2003թ. մարտ	2003թ.մարտը 2003թ. փետրվարի նկատմամբ, %
ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդամենը	179	97.3	61	107.0
Ձուկվել են, մարդ	40	114.3	27	3.8անգամ
Վիրավորվել են, մարդ	247	115.4	85	111.8

2003թ. ապրիլի 1-ի դրությամբ ճՏՊ-ից չեն բացահայտվել 27-ը, որոնց հետևանքով զոհվել են 7 և վիրավորվել 22 մարդ: